

Է. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅՏԱԿԱՆ ՀՈՒՎՈՎ ԵՆԹԱԿԱՆ ԴՐԱՔԱՐՈՒՄ

Դրաբարի քերականագիտության մեջ հայցական հոլովով ենթակայի վերաբերյալ արտահայտվել են երկու իրարամերժ կարծիքներ: Առաջին կարծիքն արտահայտողները ընդհանրապես չեն ընդունում հայցական հոլովով ենթական գրաբարում. «Հայցական հոլովն չունի իրատունս լինել տէր բայի» (Դաբրիել Ավետիքեան)¹: «Հայցական հոլովն ոչ լինի տէր բայի» (Մկրտիչ էմին)² և այլն:

Սրանց շարքում սլիտի դասել նաև այն հեղինակներին, որոնք թեք հոլովներով ենթակա չեն ընդունում:

Ներկուրդ կարծիքի կողմնակիցները գտնում են, որ գրաբարին հատուկ է հայցական հոլովով ենթական, որը, սակայն, հունաբանություն է, հունարենի աղղեցություն: Ահա թե ինչ են գրում այդ մասին. «Առ անորոշ և անցեալ դերբայս առանձինն՝ դնի երբեմն և հայցական անուն բայի, թերևս ի հելլենաբանութենէ առ մեզ սովորեալ» (Արսեն Բագրատունի)³, «Աներեւութի քով զայով հայցական անուն բայի դնել՝ յունական ոճ է» (Վրթանես Չալըխյան)⁴, «Հունական ոճով՝ անորոշ դերբայի հետ պատահում է հայցական հոլովով ենթակա ևս» (Ստեփանոս Մալխասյանց)⁵, «Այս տիպի նախադասությունները (accusativus cum infinitivo դարձվածքներով) հայերենի համար տիպական չեն և կազմված են գլխավորապես հունարենի նմանողությամբ» (Սերոբ Ղազարյան)⁶:

Երկու կարծիքներն էլ անընդունելի են:

Առաջինը սխալ է, որովհետև գրաբարում գործածական է հայցական հոլովով ենթական: Իսկ երկրորդը, եթե փաստական տեսակետից ճիշտ է, հայցականով ենթական դիտվում է իբրև գրաբարին հատուկ երևույթ, ապա սխալ է ելակետային տեսակետից. այն, որ երևույթն արժեքավորվում է իբրև հունաբանություն:

Դրանում համոզվելու համար ուետք է հաշվի առնել երկու հանգամանք՝

1. Հայցական հոլովով ենթական ինչպե՞ս է արտահայտվել այլ լեզուներում և ամենից առաջ հունարենում:

1 Գ. Ավետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 471:

2 Մ. էմին, Քերականութիւն հայկական լեզուի, Մոսկով, 1846, էջ 178:

3 Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 519, § 1224:

4 Վ. Չալըխյան, Քերականութիւն հայկական լեզուի, Վիեննա, 1885, էջ 218:

5 Ստ. Մալխասյանց, Դրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 38:

6 Սերոբ Ղազարյան, Հայոց դրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, 1961, էջ 400:

2. նույն երևույթին վերաբերող ինչպիսի՝ փաստեր կան հայերեն աղբյուրներում և ի՞նչ կարելի է եզրակացնել:

Միևնույն լեզվարնտանիքին պատկանող լեզուները շատ երևույթներով արձագանքում են միմյանց: Ցեղակցությունն ու փոխազդեցությունները իրենց դրոշմն են թողնում կոնկրետ լեզվական երևույթների վրա:

Հնդեվրոպական հին լեզուներից լատիներենը, հին հունարենը, հին հույերենը՝ զրաբարը, ունեն մի շարք բնդհանրություններ: Հայցական հոլովով ենթակայի գրսեորումը խիստ բնդհանրություն ունի հիշյալ լեզուներում:

Accusativus cum infinitivo (— հայցականը անորոշի հետ)—լատիներեն այսպես է կոչվում լեզվական այն միավորը, դարձվածքը, որը կազմվում է դոշականի կամ դերանվան հայցականից և անորոշ դերբայից, բայտ որում, զլխավոր բայ-ստորոգյալից զատ այդ հայցականը տրամաբանական ենթական է, իսկ անորոշը՝ նրա տրամաբանական ստորոգյալը:

Օրինակ՝ *Puto fratrem dormire* || *Մտածում եմ եղբորս քնելը*: *Puto* (= մտածում եմ) բայ-ստորոգյալի մոտ ունենք *fratrem* հայցականը *dormire* անորոշի հետ, որն այլ կերպ կլիներ՝ *մտածում եմ, որ եղբայրս քնել է*, քնած է: Ուրեմն *fratrem* և *dormire* (հայցականն ու անորոշը) ենթակայի և ստորոգյալի հարաբերություն են ներկայացնում:

Այլ օրինակներ՝ *Tradunt Germanos in Italiam venire* (Հաղորդում են գերմանացիների Իտալիա գալը): *Magister videt discipulos suos attente audire* (Ուսուցիչը տեսնում է իր աշակերտների ուշադիր լսելը):

Cupio omnes amicos meos ad me hodie venire (Ուզում եմ իմ բոլոր բնկերների այսօր ինձ մոտ գալը):

Ընդգծված բառերը հայցականներն են (*Germanos, discipulos, amicos*) անորոշ դերբայների (*venire, audire*) հետ, որոնք հանդես գալով զլխավոր բայ-ստորոգյալի պահանջով, տրամաբանական ենթակա-ստորոգյալ են:

Accusativus cum infinitivo-ն լատիներենում լեզվական օրինաչափություն է, որը բավականին որոշակի է և այդ լեզվի մեջ լայն տարածում ունի: Լատիներենի նման հին հունարենը նույնպես ունի accusativus cum infinitivo կապակցությունը:

Օրինակներ՝ *Πρωταγορας φησι, παντων χρηματων μετρον ανθρωπον ειναι* (Պրոտագորասն ասում է մարդու բոլոր առարկաների՝չափանիշ լինելը):

Οι σοφοι παντα, ημας ποιεινους ειναι αιτιηους (Երդումները խանգարում են մեր՝ թշնամիներ լինելը միմյանց):

Κλειστρος τους σπλιτας αυτου εχειεσσε μειναι: (Կլեարքոսը հրամայեց հուպիստների տեղում մնալը):

Այդ տոն չանթոթոն ճոթոն ειναι το φουδονοφ παρμεχαι (Պետք է մարդուն նման լինել աշխատասեր մրջյունին: Ընդգծված հայցականները (չանթոթոն, ημας, τους σπλιτας, τον ανθρωπον) անորոշ դերբայների (ειναι, μειναι) հետ դարձյալ ենթակայի և ստորոգյալի հարաբերություն են ներկայացնում:

Accusativus cum infinitivo-ն երկու լեզուներում էլ հանդես է գալիս ասացական, զգացական, հոգեկան վիճակ, ապրում, ցանկություն, պահանջ արտահայտող միազիմի բայերի և անդամ արտահայտությունների պահանջով:

7 Օրինակները բերվում են գաղափարով գլոսկված տեքստերից: См. В. И. Ярко и В. И. Поболы. Латинский язык, Москва, 1961.

Այդ բայերից են. օրինակ՝

dico || λέγω, φημι || ասում եմ:

puto || νομίζω, ᾔρομαι, οἶμαι || մտածում եմ:

sentio || զգում եմ:

volo || βούλομαι || ուզում եմ:

jubeo || κελεύω || կարգադրում եմ, հրամայում եմ:

veto || κωλύω || արգելում եմ, խանգարում եմ:

oportet || πρέπει || հետևում է:

necesse est || χρει. ̎ει || անհրաժեշտ է, պետք է և անհրաժեշտ է:

Անորոշի հետ հայցականի կիրառությունը դիտելի է նաև ժամանակակից արևմտաեվրոպական մի շարք լեզուներում՝ անգլերենում, ֆրանսերենում, գերմաներենում: Դա իրենից ներկայացնում է մի բարդ խնդիր, որի մեջ գերանունը դրվում է հայցական հոլովով՝ ներկայացնելով արամաբանական ենթակա, որն իր հետ ունենում է անորոշ գերբայ՝ արամաբանական ստորոգյալ:

Այդպիսի բարդ խնդիրները օգտագործվում են նույն տիպի բայերի պահանջով, ինչպիսիք ցույց տվեցինք լատիներեն, հունարեն լեզուներում: Բերենք օրինակներ:

Անգլերեն՝ I want him to go there եւ ուզում եմ նրա գնալն աֆրիկա:

Ֆրանսերեն՝ Je l'entends chanter եւ լսում եմ նրա երգելը:

Դերմաներեն՝ Ich hore ihn singen եւ լսում եմ նրա երգելը:

Անգլերենը, ֆրանսերենը և գերմաներենը պարզացման պրոցեսում հավատարիմ են մնացել լատիներենի բառապաշարին: Այդ լեզուների բառապաշարի զգալի մասը լատինական ծագում ունի: Սակայն դժվար է ասել, որ քերականական ձևերը նույնպես լատինական են: Ծիշտ կլիներ եզրակացնել, որ accusativus cum infinitivo-ի արտահայտությունը այս երեք լեզուներում լեզվի պարզացման ներքին օրինաչափությունների արդյունք է, բայց ոչ քերականական փոխանցում:

Վերը նշեցինք, որ հայցականով անորոշը (accus. cum infinit.) գործածական է նաև գրաբարում: Այն ծավալուն կիրառություն չի ստացել մատենագրություններում (չնայած կան մատենագիրներ էլ, որոնք բոլորովին չեն օգտագործել): Սակայն փաստերը վկայում են նրա որոշակի գոյր, մեր լեզվի մեջ նրա կայուն տեղը, որի աշխատակարար մեկնաբանությունը լեզվի պարզացման ներքին օրինաչափության անտեսում է և մայրենի լեզվի սեփական միջոցների թերազնահատում:

Հայցական հոլովով ենթական գրաբարում ինքնագոյ երևույթ չէ: Այն յուրահատուկ է գրաբարին, կապում է այնպիսի ոճ, որպիսին չի հանդիպում գրաբարի մահացման շրջանում և լեզվի հաջորդ փուլերում:

Սակավորթիվ կոնստրուկցիոն (կոմբլ., համարել, տեսլ) և միադիմի բայերի պահանջով գործածվում են հայցականն ու անորոշ գերբայը, որոնք իրենց փոխհարաբերությամբ ենթակայի և ստորոգյալի հարաբերություն են զբոստանում: Օրինակ՝ Կամիմ զնա լինել իշխան||Կամենում եմ նրան լինել իշխան||Կամենում եմ նրա իշխան լինելը||Կոմենում եմ, որ նա իշխան լինի: «Զնա»-ն սովորական հայցական չէ, կամել (իմ) բայի ուղիղ խնդիրը, կրող ստարկան չէ, այլ նրա պահանջով կիրառված և, կարծես, ինքնուրույնություն ստացած բառ է, որը փոխարինելով ստարկային, ունի հատկանիշ՝ արա-

հայտնի անորոշ դերբայով, իսկ անորոշ ընդհանրապես ստորոգման գաղափար ունի. նրա լինելը⁸ նա է:

Ուրեմն, «զնա»-ն տրամաբանական-քերականական ենթակա է, «լինել»-ը՝ տրամաբանական-քերականական ստորոգյալ՝ չնայած վերջինս կոնկրետ ձևավորում (եղանակ, ժամանակ, դեմք, թիվ) չունի:

Զթշնամիսն իմ գայնոսիկ որք ոչն կամէին զիս քազաւորել՝ ածէք այսր եւ սպանէք⁹ իմ այն թշնամիներին, որոնք չեն կամենում, որ ես քազավորեմ, բերեք այստեղ և սպանեք:

Ասացեր մի եւս լինել բնակիչ ի տեղւոջս յայսմիկ¹⁰ Ասացիր, որ այստեղ բնակիչ չի լինի (կամ՝ չկա):

Դէպ լինէր երեւել ընդ երկինս և ընդ երկիր արս հեծեալս¹¹ Պատահեր, որ երկնքում և երկրի վրա հեծեալգոր երևար:

Կամել, ասել և դէպ լինել բայերի պահանջով ունենք հայցականով ենթականեր (զիս, բնակիչ, արս հեծեալս):

Անորոշ և որոշյալ առումները դեր ունեն հայցականը անորոշի հետ կապակցության ձևավորման մեջ: Որոշյալ առման հարցը պարզ է. «զ» նախդիրով հայցականը անորոշի հետ քերականների կողմից ընդունվել է հայցականով ենթակա: Իսկ անորոշ առմամբ հայցականը, որն անորոշ դերբայի հետ է, քերականների մի մասը համարում է հայցականով ենթակա, մյուս մասը՝ ուղղականով:

Զալրխյանը բերում է մի շարք օրինակներ (Ասեն ուրուումն լինել. Ասի՛ ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց) և նկատում. «Շատերն այս անորոշ հայցականն (որոտումն, երկիր—է. Մ.) ուղղական կարծած են»¹¹:

Այդ դիտողությունը, օրինակ, վերաբերում է Արսեն Բագրատունուն, որը բերելով նույն նախադասությունները¹², ուրուումն, երկիր, բնակիչ, արս հեծեալս և նման բառերը դիտում է «ուղղական անուն բայի առ անորոշ դերբայս»:

Ինչպես երևում է, միևնույն երևույթի մասին կան տարբեր կարծիքներ: Հարց է ծագում՝ ո՞րն է ընդունելի: Մեր կարծիքով, երկու տեսակետներն էլ անընդունելի են, որովհետև երկու դեպքում էլ հաշվի է առնվում բառերի միայն ձևական կողմը՝ բառը անորոշ առումով է, թե՛ որոշյալ, «զայո՞վ» է, թե՛ ոչ: Սխալված չենք լինի, եթե հաշվի առնենք նման բառերի ձևա-իմաստային կողմը, որպես «հայցական» կամ «ուղղական», և նրանց հարաբերությունը «զլիսաւոր (դիմաւոր)» բայերի հետ, որովհետև յուրահատկությունը առնչվում է այդ բայերին. նրանք են պահանջողն ու թելադրողը, նրանցով է տարբերակվում սովորաբար դեպքում լեզվի մի օրինաչափությունը: Հետևապես, «ուղղականը» կամ «հայցականը» որոշելիս ելակետ պետք է ընդունել հետևյալը. ասացական, զգացական, ցանկություն արտահայտող, միադիմի և իմաստային տեսակետից դրանց մոտիկ բայերի պահանջով դործածված անորոշ

8 Վ. Չալրխյան, Քերականութիւն յայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 218:

9 Նույն տեղում, էջ 217:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում:

12 Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 249:

ղերբայի հետ անորոշ առումով բառերը պետք է համարել հայցականով ենթական, իսկ այլ կարգի բայերի մոտ՝ ուղղականով:

Ա. Բաղրատունին, օրինակ, անորոշի հետ ուղղակի է համարում բարոթյունը, անուն բառերը (Աւետարանէ՛ր Քրիստոսի գալստեամբն լինել այս ամենայն բարութիւնք. Պարտ և արժան էր երեւելպես Բարոզիլ անուն նորա)¹³:

Սակայն այդպես չէ, որովհետև առաջին նախադասության բայ-ստորոգյալը (աւետարանէ՛ր) չունի երկրորդի (պարտ էր||արժան էր) հատկութիւնը. նրան չի առնչվում որևէ յուրահատկութիւն, պահանջ, որպեսզի այն ընդուներ անորոշով հայցական: Այդ պատճառով էլ բարութիւնք պետք է դիտել ուղղականով ենթակա, իսկ անունը՝ հայցականով:

Դրանից հետևում է, որ Բաղրատունու (նաև ուրիշների) մոտ եղած այն օրինակները, որոնց մեջ դիտված են անորոշ ղերբայի հետ անորոշ առումով ուղղական ենթականեր, պետք է բաժանել երկու մասի (ըստ գլխավոր բայ-ստորոգյալի պահանջի). առաջին՝ անորոշի հետ ուղղական ենթականեր, երկրորդ՝ անորոշի հետ հայցական ենթականեր:

Ուղղականով ենթակայի օրինակներ՝ Յառաջ քան զրազաւորել րազաւոր որդոյն Իսրայէլի: Հրամայէ պատերազմել ընկեր ընդ ընկերի իւրում: Մի ևս լինել ի սմա բնակիչ: Տեսի զարմացման տեսիլ, իջանել անօր ինչ, նշանակեաց հոգւովն՝ սով մեծ լինել և այլն:

Հայցականով ենթակայի օրինակներ՝ Ոմանք ասացին՝ ոչ բնաւ զոլ աստուած: Դէպ լինէր թշնամիւն ի ձեռս Անտիոքայ և զորացն ապականել: Որքան աստուծոյ վկայութիւնն պարտ և արժան է առ մեզ հաւատարիմ լինել և այլն:

Վերջին նախադասութիւնների մեջ ասացին, դէպ լինել, պարտ և արժան է բայերի պահանջով ունենք անորոշ առումով հայցական ենթակա անորոշ ղերբայի հետ:

Մեր կարծիքով, միայն այդ հիմքով կարելի է լուծել անորոշի հետ գործածվող «ուղղականի» և «հայցականի» հարցը:

Մինչ այժմ խոսեցինք accusativus cum infinitivo-ի գրաբարյան կազմութեան և արտահայտութեան մասին: Մնում է պարզել, թե գրաբարին հատուկ լինելով՝ սեփական միջոց է, թե՛ հունարանութիւն է:

Ա. Բաղրատունու, Վ. Չալրխյանի, Ստ. Մալխասյանցի կարծիքով այդ երևույթն առավել շատ արտահայտվել է հունարան մատենագիրների մոտ և, ընդհակառակն, խիստ սակավ՝ ընտիր գրվածքներում:

Դիմենք փաստերի՝ համեմատելով հորենացու և Եզնիկի ստեղծագործութիւնները:

հորենացու մոտ հանդիպում են հետևյալ օրինակները՝

Ձի ասէին զնա այր ընտիր լինել և յամենստ յամենայնի¹⁴:

Յաւուրս սորա լիալ զպատանի ոմն յազգէն անձաւացիաց¹⁵:

13 Ա. Բ ա գ ր ա տ ու ն ի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, էջ 249—250: Հաջորդ օրինակները տե՛ս նույն տեղում:

14 Մ. հ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Պատմութիւն Հայոց, Շուշի, արտատպւած Թիֆլիսի՝ 1881 թ. հրատարակութիւնից, էջ 192:

15 նույն տեղում, էջ 192:

Տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն, և զմտաւ ածեալ զՍնպոմոն երկոտաւ սանամեայ թագաւորեալ Իսրայէլի¹⁶: Մեծ իշխանն Բակուր, որ բղնէին Աղտրնեայ կողիր, տեսեալ զՍանատուկ րագաւորեալ ի Փայտակարան, զնոյն խորհեցաւ և ինքն¹⁷:

Խորենացու պատմութեան մեջ կիրառուած հայցականով ենթակայի սուկավ քանակը, մյուս կողմից էլ այդ հատուկ ոճի շեղումը (հայցականի կիրառութիւնն անցյալ դերբայների հետ՝ զմտաւ ածեալ, թագաւորեալ) ցույց են տալիս հունաբան ոճեր կիրառող մատենագրի «անհամապատասխանութիւնը» հունարանութեան նկատմամբ:

Ապա ինչպե՞ս է պատկերը ընտիր մատենագրի՝ Եղնիկի մոտ: «Եղծ»-ի մեջ հայցականով ենթակաները ավելի շատ են, կապակցութիւններն անշեղ, բան Խորենացու պատմութեան մեջ:

Օրինակներ՝ Եթէ զամենայն զԱստուած յամենայն ի հիւզն լինել ասիցեն որչափ մեծ ևս ասիցեն զԱստուած, գտանի հիւզն մեծ քան զնա¹⁸: Ապա պատճառս չարեացն պարտ է զնա ասել¹⁹: Բայց մեզ մի լիցի այնպիսի ինչ ասել. այլ զարիսն ոչ անձնաւոր կարծել, այլ կամսոթին²⁰: Մի՞թե պատճառ չարեաց զտէրն պարտ իցէ իմանալ²¹: Որովհետեւ, ասեն չարեաց արարիչ զԱստուած չկամիք ասել²²:

Անդ հանրագիտ լինելոյ արեգական ասեն զԱմենամեծ²³, Եվ այնու ոչ ի չարէ ումեթէ պարտ է զգագանս և զհնիս իմանալ, այլ ի միջոցէ բարւոյ արարչէ²⁴:

Զաստուած, զնա, զչարիսն, զտէրն, զԱրհմեն, զգաղանս և զճճիս հայցականները ընդգծված անորոշ դերբայների հետ հանդես են եկել ասիցեն, պարտ է, մի լիցի ասել, պարտ իցէ, չկամիք ասեն բայերի թելադրանքով:

Հայցականով ենթակայի փաստեր կան նաև ընտիր գրաբարով գրված մի այլ գրքում՝ «Աստվածաշնչում»: Ասա զիմաստութիւն քոյր քեզ լինել²⁵: Նույնպէս և զսարկավազումն՝ պարկեշտս պարտ է լինել, որ կա յառաջ²⁶, Իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս փասն ձեր ամենեցուն, կցորդս ինձ շնորհաց զձեզ ամենեւին լինել²⁷:

Բերված օրինակները համոզում են, որ իրոք «ընտիր գրութեան մեջ ալ» կիրառական է անորոշի հետ հայցականը: Սակայն չպիտի եզրակացնել, որ «ընտրելագոյն մատենագիրները խույս են տալիս այս հունարանութիւնից» (Ստ. Մալխասյանց), որովհետեւ նախ՝ ընտրելագոյն մատենագրի՝ Եղնիկի, մոտ այդ երևույթն ավելին է կիրառված, քան հունարան հեղինակի՝ Խորենա-

16 Մ. Խորենացի, Պատմութիւն Հաւոց, Նուշի, էջ 255:

17 Նույն տեղում, էջ 257:

18 Ե. Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, էջ 17:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում, էջ 27—28:

21 Նույն տեղում, էջ 33:

22 Նույն տեղում, էջ 37:

23 Նույն տեղում, էջ 98:

24 Նույն տեղում, էջ 102:

25 Աստուածաշնչի, Առակք, էջ 151:

26 Ա. Բաղրատունի, Հայերէն բերականութիւն ի պէտս դարդացելոց, էջ 215:

27 Նույն տեղում:

ցու մոտ, ապա դա հունարանության արդյունք չէ, քանի որ համեմատարար շատ կա ընտիր մատենագրություններում:

Ընչ վերաբերում է այդ երևույթից «խույս տալուն» (բայց ոչ հունարանությունից), պետք է նշել. հնարավոր է, որ մեր լեզվի մեջ եղած քերականական իրողության փոփոխություն էր տեղի ունենում, լեզվի դարգացման ներքին օրինաչափության հետևանքով նեղանում էր, սահմանափակվում նրա գործածության ոլորտը, ինչպես որ դարերի աստիճանական փոփոխությունները պատճառ են դառնում շատ լեզվակետի երևույթների վերացման:

Անվիճելի փաստ է, որ լեզվի ներքին փոփոխություններն ամենից առաջ արտահայտվում են ընտիր հեղինակների ստեղծագործություններում և ոչ թե այլ դպրոցներին պատկանող հեղինակների երկերում:

Այսպիսով, accusativus cum infinitivo-ն գործածական լինելով միևնույն լեզվարանտանիքին պատկանող մի քանի լեզուներում, մի լեզվից մյուսին անցնելու, փոխանցման արդյունք չէ, այլ առանձին լեզվի ներքին օրինաչափության արդյունք է: Տվյալ դեպքում նույն երևույթի՝ տարբեր լեզուներում դրսևորվելը վկայում է այդ լեզուների ցեղակցության մասին և ուրիշ ոչինչ:

Ասածից հետևում է.

1. Երբարի քերականության պատմության մեջ սխալ ղեկավարություն է ստացել հայցական անորոշի հետ (accus. cum infin.) երևույթը՝ այն համարվելով «հունարանություն», «հունական ոճ»: Այդպես է արժեքավորվել հունարան մատենագիրների քերթվածքների հիման վրա:

2. Accus. cum infin.-ն գրաբարին հատուկ երևույթ է, որն իր արտահայտությունն է գտել գրաբարյան ընտիր ստեղծագործություններում:

3. Անորոշի հետ հայցական ենթական, լինելով պատմական-քերականական կատեգորիա, գործեց գրաբարում և լեզվի ներքին օրինաչափությունների դարգացման, քերականական ձևերի հղման ու փոփոխության հետևանքով վերածվեց անընդունելի ոճի և վերացվեց հայոց լեզվի հաջորդ փուլերում:

Երբարի հայցական հոլովով (ինչպես նաև մյուս թեք հոլովներով) ենթականյի ուսումնասիրությունը կարևոր ավանդ է՝ կապված էրգատիվ կառուցվածքի նախադասության ուսումնասիրության հետ:

Ակադեմիկոս Ի. Բ. Մեշանինովը նշում է, որ «ենթականյի քերականական կառուցվածքի տարբերությամբ հակադրվում են նախադասության երկու ձևաբանական կառուցվածքներ՝ անվանական՝ ենթականյի միակ հոլովով (ուղղականով—է. Մ.), էրգատիվ՝ ենթականյի տարբեր հոլովներով²⁸ (թեք հոլովներով—է. Մ.): Էրգատիվ կառուցվածքում ենթականյի հոլովը ղեկավարվում է ուղիղ խնդրով և ստորոգյալով:

Ի. Մեշանինովը հաստատում է, որ էրգատիվ կառուցվածքը անվանական կառուցվածքի համեմատ հին երևույթ է²⁹, իսկ արժես վերաբերում է հենց հայերենին: Գրաբարյան շրջանում անվանական կառուցվածքի մոտ օրինաչափորեն դործում էր թեք հոլովներով ենթականյի նախադասության կառուցվածքը: Իսկ ավելի կոնկրետ՝ հայցական հոլովով ենթականյի արտահայտությունը շատ կողմերով առնչվում է էրգատիվ կառուցվածքին: Եթե, օրինակ,

²⁸ И. И. Мещанinov, Структура предложения, Москва—Ленинград, 1963.

²⁹ Эргативная конструкция предложения, Ленинград, 1964, стр. 9.

էրգատիվ կառուցվածքի լեզուներում (Հսկիմոսերեն, իբերո-կովկասյան, չուկոտյան, վրացերեն, դաղստանյան, Հյուսիսամերիկյան հնդկական, ավարերեն և այլն) ուղիղ խնդրի միևնույն հոլովի դեպքում, ինչպես նաև ստորոգյալի պահանջով, ենթական գործածվում է էրգատիվ հոլովով՝ թեք հոլովներինք որևէ մեկով (գործիական, հարաբերական և այլն), ապա գրաբարում սակավաթիվ բայ-ստորոգյալների պահանջով ենթական դրվում է հայցական հոլովով, որի բախտը տվյալ դեպքում կապվում է ոչ թե ուղիղ խնդրին, այլ անորոշ դերբային:

Այսպիսով, հայցական հոլովով (նաև մյուս թեք հոլովներով) ենթական լատահայտության ուսումնասիրությունը հետաքրքրություն է ներկայացնում նաև այն տեսակետին, որ այն առնչվում է ժամանակակից սովետական լեզվաբանությանը հետաքրքրող հարցերին՝ էրգատիվ կառուցվածքի նախադասության ուսումնասիրությանը:

Э. МКРТЧЯН

ПОДЛЕЖАЩЕЕ, ВЫРАЖЕННОЕ ВИНИТЕЛЬНЫМ ПАДЕЖОМ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р е з ю м е

В истории грамматики древнеармянского языка — грабара в отношении подлежащего, выраженного винительным падежом, высказывалось два взаимоисключающих мнения. Придерживающиеся первого мнения ученые вообще не признают подлежащего, выраженного винительным падежом (Габриэл Аветисян, Мкртич Эмин и другие).

Сторонники второго мнения находят, что грабару свойственно подлежащее, выраженное винительным падежом, которое, однако, является гречизмом (А. Багратуни, В. Чалыхян, С. Малхасянц, С. Казарян).

Оба мнения неприемлемы. Первое потому, что в грабаре употребительно подлежащее, выраженное винительным падежом, а второе потому, что явление это является гречизмом.

Подлежащее, выраженное винительным падежом, употребляемое с инфинитивом (*accusativus cum infinitivo*), характерно для латыни, греческого и древнеармянского языков, а также современного английского, французского и немецкого. Наличие того же самого грамматического явления в языках, относящихся к одной языковой семье, свидетельствует о генетической общности этого явления.

Употребление винительного с инфинитивом (*accus. cum infinit.*) в грабаре — закономерное явление, а не результат воздействия или заимствования у греческого языка. Доказательством служит его частое использование в языке классического периода древнеармянского языка.